

ՏՐՈՂՎԱԾ ԲԱՑԱՂԱՅՏԻՉԸ ԵՎ ՆԵՐՂՐՅԱԼ
ԿԱՌՈՒՅՑՆԵՐԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԼԵԶՎՈՒՄ

Տրոհված բացահայտչի և նախադասության կազմի մեջ մտնող ներդրյալ բառերի և կառույցների համեմատությունն առանձին հետաքրքրություն է ներկայացնում, քանի որ ձևի նմանության պատճառով բացահայտիչը երբեմն նույնացվում է վերջիններիս հետ: Այս առումով անհրաժեշտ ենք համարում անդրադառնալ Տ.Ռ.Կոտլյարի աշխատությանը, որտեղ հեղինակը նշում է ներդրյալ կառույցների հետևյալ առանձնահատկությունները /4, 5, 6/.

ա/ այդ կառույցներին հատուկ հնչերանգն ու կետադրությունը,

բ/ ազատ շարադասությունը /ներդրյալ կառույցները կարող են դրվել նախադասության ցանկացած անդամների միջև, նույնիսկ՝ բայի վերլուծական ձևերի/.

գ/ ձևի անկախությունը /ծևաբանական համաձայնեցման բացակայություն և ձևական բառերի գործածության կանոնների խախտում/:

Նշված առանձնահատկությունները Տ.Ռ.Կոտլյարը հիմնավորում է հետևյալ օրինակներով.

...Irene, a woman who had almost disgraced the family, and – still more amazing – was to him no blood relation... (4, 11) /Միջանկյալ կառույցը դրված է նախադասության համազոր անդամների միջև/:

And the lawyer – foul brute – had unsympathetically said that George's possessions ought to be given to his wife. (4, 17) /հոդի բացակայություն/:

Fenwick took the paper and perceiving that it was a translation of Latin prose – Cicero, probably, he imagined – written in a smooth yet unformed hand, he began to read. (4, 18) /Լատիդրի բացակայություն/:

Անդրադառնաք վերը նշված կետերին առանձին-առանձին:

Կետադրությունն ու հնչերանգը, ըստ մեզ, բավարար պայման չեն նախադասության անդամների առանձնացման և տարբերակման համար, քանի որ.

ա/ և՛ ներդրյալ կառույցները, և՛ բացահայտիչը կարող են տրոհվել ստորակետերով, փակագծերով կամ տրոհագծերով,

բ/ տրոհված և չտրոհված բացահայտիչներին հատուկ են միանգամայն տարբեր կետադրություններ և հնչերանգներ, այնուամենայնիվ դրանք երկուսն

էլ համարվում են բացահայտիչ:

Կարելի է բերել միևնույն կետադրական միջոցներով տրոհված կառույցների օրինակներ, որոնցում այդ կառույցները չեն կարող նույնացվել՝ կապված նախադասության մեջ նրանց միջոցով ներմուծվող իմաստի, այսինքն նրանց տեղեկատվական գործառույթի հետ:

...it was half an hour beyond his dinner-time – he had had no lunch – and a strange primeval importance surged up within him. (4, 5)

հմմ. Always happy to see Mr Rowley – a rascal.

It was bad for her sell her ear-rings to Captain Butler (of all people!) and buy the mill without even consulting her own husband about it... (4, 5)

հմմ. At that time Joe Glaser (Louis' manager) had serious doubts about Europe as a commercial position. (4, 11)

Օ.Ս.Ալխմանովան, սահմանելով տրոհված բացահայտիչը, նշում է, որ այն որոշչային-ստորոգելիական կապի մեջ է գտնվում լրացյալ գոյականի հետ՝ իմաստով նմանվելով երկրորդային ստորոգյալի /1, 360/: Ակնհայտ է, որ վերը բերված օրինակներում a rascal գոյականը և Louis' manager բառակապակցությունը նշված կապի մեջ են համապատասխանաբար Mr Rowley և Joe Glaser գոյականների հետ, քանի որ հնարավոր է հետևյալ փոխակերպումը.

Mr Rowley – a rascal → Mr Rowley was a rascal.

Joe Glaser (Louis' manager) → Joe Glaser was Louis' manager.

Սակայն he had had no lunch և of all people կառույցների դեպքում նման փոխանակումն անհնար է: Հետևաբար, նշված կառույցները տարբեր շարահյուսական գործառույթ ունեն նախադասության մեջ՝ անկախ նրանց հատուկ տրոհման միջոցներից:

Հետևյալ առանձնահատկությունը, որով Տ.Ռ.Կոտլյարը բնութագրում է ներդրյալ կառույցները, ազատ շարադասությունն է: Հեղինակը բերում է հետևյալ օրինակը.

The music began again – a waltz, and still as a statue in the recess of the window, ... Soames waited (4, 12), նշելով, որ a waltz գոյականն իմաստով վերագրվում է music գոյականին, սակայն, նրանից անջատված լինելով նախադասության այլ անդամներով /ստորոգյալ և պարագա/, պետք է դիտվի որպես ներդրյալ բառ:

Նպատակահարմար չգտնելով հիմնվել այս առանձնահատկության

վրա, նշենք, որ.

ա/ նախադասության տրոհված անդամներին երբեմն հատուկ է լրաց-
յալից հեռու շարադասվելը, քանի որ նախադասության ցանկացած անդամ,
տրոհվելով, ստանում է որոշակի շարահյուսական և իմաստային անկախություն
նախադասության կառուցվածքում: Օրինակ.

This resignation had, in the course of the years, developed into a quiet
melancholy. (Iris Murdoch) /Տրոհված ժամանակի պարազան դրված է բայի
վերլուծական ձևի բաղադրիչների միջև/:

So it was that Rainborough, who had been used, when he admired a
woman, to continue his attention to her head... (Iris Murdoch)

/Պարազա-երկրորդական նախադասությունը դրված է բաղադրյալ
բայական ստորոգյալի բաղադրիչների միջև/: But still Mischa stood there, rigid
and white. (Iris Murdoch) /Տրոհված որոշիչներն անջատված են որոշյալից
ստորոգյալով և պարազայով/:

Հետևաբար բացահայտիչը ևս, որպես նախադասության տրոհված
երկրորդական անդամ, կարող է ունենալ ազատ շարադասություն:

բ/ Առաջնային համարելով շարադասության առանձնահատկությունը,
Տ.Կոտլյարն անտեսում է նախադասության անդամի սահմանման համար խիստ
կարևոր իմաստային առանձնահատկությունը. վերը բերված օրինակում a waltz
գոյականը ճշտում է the music գոյականի իմաստը՝ իմաստային գործառույթ,
որով բնութագրվում է բացահայտիչը:

Մինչդեռ մի այլ օրինակում՝ ...Irene, a woman who had disgraced the
family and – still more amazing – was no blood relation to him..., ընդգծված
բառակապակցությունը ներդրյալ կառույց է ոչ թե այն պատճառով, որ դրված է
նախադասության համագոր անդամների միջև, այլ որովհետև նրա միջոցով
ներմուծված տեղեկատվությունը միջանկյալ բնույթ է կրում և արտահայտում
խոսողի վերաբերմունքը: Մինչդեռ բացահայտչի իմաստային գործառույթը
կայանում է բացահայտյալի վերաբերյալ որոշակի իրական տեղեկատվություն
հաղորդելու մեջ:

Այսուհանդերձ առաջարկում ենք առանձնացնել տրոհված բացահայտ-
չի մի ենթատեսակ, որը բացահայտյալից անջատված է նախադասության այլ
անդամներով, և անվանել այն հեռադիր բացահայտիչ: Հեռադիր բացահայտչի
և միջանկյալ կառույցի միջև տարբերությունն իմաստային է: Հեռադիր բացա-

հայտիչը նույնիսկ բացահայտյալից անջատ շարադասվելու պայմանով, ունի նույն նշանակելին, ինչ և բացահայտյալը: Մինչդեռ միջանկյալ բառերին ու կառույցներին, անկախ շարադասությունից, հատուկ չէ իմաստային նույնությունը նախադասության որևէ անդամի հետ:

«Շարադասությունը նախադասության տրոհված անդամների համար չի հանդիսանում որոշիչ հատկանիշ: Տրոհումը ենթարկվում է իր օրինաչափություններին, այդ թվում նաև՝ նախադասության անդամների շարադասության հարցում» /2, 13/:

Միջանկյալ կառույցների սահմանման երրորդ առանձնահատկությունը Տ.Ռ.Կոտլյարը համարում է ձևաբանական համաձայնեցման բացակայությունը լրացյալ բառի հետ: Այստեղից կարելի է կատարել երկու հետևություն. կամ ձևաբանորեն չհամաձայնեցվող բառը /կամ բառակապակցությունը/ պետք է համարել ներդրյալ կառույց, ինչպես առաջարկում է հեղինակը, կամ էլ ընդունել, որ որոշ դեպքերում բացահայտիչը կարող է չհամաձայնեցվել բացահայտյալի հետ: Երկրորդը մեզ ավելի նպատակահարմար է ներկայանում, քանի որ ներդրյալ կառույցները ոչ միայն ձևաբանորեն չեն համաձայնեցվում, այլև հաճախ իմաստով չեն վերագրվում նախադասության ոչ մի անդամի. դրանք չեն համարվում նախադասության անդամ: Մինչդեռ տրոհված բացահայտիչը, նույնիսկ բացահայտյալի հետ ձևաբանական անհամաձայնության պայմանով, լրացնում է նրան, իմաստով նույնացվելով կամ մի այլ անուն տալով լրացյալին: «Բառիմաստային և քերականական հարաբերությունների միջև գոյություն ունի որոշակի համապատասխանություն. մեծ մասամբ բառերի միջև քերականական կապերը նշում են այնպիսի հարաբերություններ, որոնք բխում են համակցվող բառերի բառային իմաստներից» /3, 56/։ «Նախադասության ավանդական, մասնավորապես երկրորդական անդամների ուսմունքը նվիրված է նախադասությունը կազմող շարահյուսական միավորների իմաստային հարաբերությունների բացահայտմանը» /4, 13/։ Բերենք օրինակներ, որոնցում նախադասության տրոհված անդամը լրացյալի հետ չի համաձայնեցվում հոդով և նախդրով, սակայն, ելնելով նրա միջոցով նախադասության մեջ ներմուծվող տեղեկատվության բնույթից, նպատակահարմար է այն համարել բացահայտիչ և ոչ՝ ներդրյալ կառույց.

She almost hated the Count: low-browed little fellow, belonging to the race of prehistoric slaves. (D. H. Laurence)

Their whirl of gaiety was interrupted by the death of Mrs Maturin, that colourless, highbrow lady... (Somerset Maugham)

Այսպիսով, տրոհված բացահայտչի և նախադասության կազմում ընդգրկված ներդրյալ կառույցների համեմատությունից կարելի է հանգել հետևյալ եզրակացություններին.

- բացահայտիչը, ինչպես և ներդրյալ կառույցները, կարող է նախադասության այլ անդամներից տրոհվել ստորակետերով, տրոհագծերով կամ փակագծերով.
- բացահայտչին, ինչպես նաև ներդրյալ բառերին ու կառույցներին, հատուկ է հնչերանգային որոշակի ինքնուրույնություն.
- ներդրյալ կառույցների մեծ՝ բացահայտիչը կարող է ունենալ ազատ շարադասություն /հեռադիր բացահայտիչ/.
- սակայն, հաշվի առնելով տրոհված բացահայտչի և ներդրյալ կառույցների իմաստային գործառույթների էական տարբերությունը, նպատակահարմար չէ դրանք նույնացնել:

Եթե բացահայտիչն իմաստով վերագրվում է բացահայտյալին՝ նախադասության մեջ ներմուծելով որոշակի հավելյալ տեղեկատվություն նրա վերաբերյալ, ապա ներդրյալ կառույցների միջոցով ներմուծվում է այնպիսի տեղեկատվություն, որն արտահայտում է խոսողի վերաբերմունքը՝ հաճախ վերագրելով այն ոչ թե նախադասության որոշակի անդամի, այլ՝ ողջ նախադասությանը: Բացահայտչի և բացահայտյալի միջև շարահյուսական կապը մոտ է երկրորդային ստորոգման, մինչդեռ ներդրյալ կառույցները, չհամարվելով նախադասության անդամ, շարահյուսորեն անկախ են:

Գրականություն

1. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, М., 1969.
2. Бархударов А.С., Штелинг Д.А, Грамматика английского языка, М., 1965.
3. Дудорова Э.С., Коммуникативно-прагматический аспект обособленных компонентов предложения и их семантико-синтаксические свойства. Автореф., 1994, СПб.
4. Котляр Т.Р., Вставочные конструкции в современном английском языке, Саратов, 1962.
5. Смирницкий А.И., Синтаксис английского языка. М., 1957.
6. Քոսյան Վ.Ա., Ժամանակակից հայերենի նախադասության վերլուծության հարցեր, Երևան, 1976: